## 1. ԳՆԴԵՎԱՆՔ ԵՎ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂ

Վայոց ձորի այս հին և ճարտարապետական տեսակետից արժեքավոր վանքը գտնվում է Գնդեվազ գյուղից հարավ, անդնդախոր ձորի մեջ, Արփա գետի ձախ ափին։

Վանքի հիմնադրման և նրա հետ կապված մանրամասնությունների ընդարձակորեն շարադրել է Ստ. Օրբելյանը, քաղելով ըստ իր սովորության բուն իսկ վանքի արձանագրություններից և դրույցներից (թերևս նաև արխիվային նյութերից)։

Համաձայն պատմագրի հաղորդածների, վանքը շինել է տվել Արծրունի Դերենիկի դուստր և սյունյաց Սմբատ իշխանի կին՝ տիկին Սոփիան։ Վանքի շինությունն ավարտվել է 936 թվականին։ Շինության ժամանակ առաջնորդ է նշանակված եղել Սարգիս քահանան և շինարարության ընդհանուր ղեկավար՝ գործակալ—նկարիչ Եղիշա քահանան։

Վանքի շինությունն ավարտելուց հետո հավաքել են մերձակա վայրերում ապրող ճգնավորներին, որոնցից ամենահառաջավորն ու անվանին եղել է Ստեփան Գնդանին։ Նույն ժամանակ տիկին Սոփիան հիմնել է տալիս Գնդևազ գյուղը և Առչար գյուղի հետ նվիրում վանքին։ Այս երկու գյուղերից ստացվող եկամուտներով պետք է ապրեին Գնդեվանքի վանականները։

Իր այս գործունեության հավերժացման համար՝ տիկին Սոփիան վանքի եկեղեցու պատին գրել է տալիս մի ընդարձակ արձանագրություն, որի միայն բեկորներն են հասել մեզ։ 999 թ. վանահայր Քրիստափորը եկեղեցու արևմուտքում կառուցում է գավիթ, իսկ 1008 թ. առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը վանքի և գյուղի հողերի ոռոգման նպատակով Ջկնարած գետից (Բազար-չայ, Որոտանի վերին հոսանք) մեծ առու է հանում։ Սա մի դժվարին և իր ժամանակին նշանավոր կառույց էր. նրա երկարությունը 24 կիլոմետր է եղել. ճեղքել, անցել է Վայոց ձորի և Սիսիանի ջրբաժան՝ Կանգար Ալանգյալի՝ լեռնաշղթան և հասել Գնդեվազի դաշտերը։

Շինարարական այս նշանավոր գործի մասին վանքի եկեղեցու պատին գրվել է արձանագրություն, դժբախտաբար միայն ներկով՝ «սևադեղով», որից այժմ ոչ մի հետք չի մնացել. բարեբախտաբար Ստ. Օրբելյանն այն օգտագործել է իր «Պատմության» մեջ և բովանդակությունը շարադրել։

Հետագա նորոգումների, ինչպես նաև վանքի պատմության համար իբրև աղբյուր մնում են միայն արձանագրությունները, որոնք կցկտուր տեղեկություններ են հաղորդում այդ մասին։

Բազմաթիվ նորոգումներից և կարկատաններից հետո, ներկայումս լրիվ կանգուն է միայն գլխավոր եկեղեցին, թեև շատ անկայուն։ Գավթի ծածկը և պատերի մեծ մասը փլված են։ Ընդարձակ բակը երբեմն շրջափակված է եղել բարձր պարիսպով, որի մեծ մասը նույնպես փլված է։ Բակի զանազան մասերում գոյություն ունեցող տնտեսական շենքերից կանգուն է մնացել միայն եկեղեցու հարավում գտնվողը, որի պատերի մեջ նորոգումների ժամանակ ագուցված կան արձանագրված խաչքարեր։

Գնդեվանքի և Գնդեվազ գյուղի արձանագրությունների այս ժողովածուի մեջ ամփոփված են այժմ գոյություն ունեցող 30 ամբողջական կամ կիսատ արձանագրություններ, որոնցից ութը (1—8) վերաբերում են հիմնադրման ժամանակին, իսկ մնացածները՝ XIII և ավելի ուշ դարերի։

Հնագույն արձանագրություններից երկուսի մասին Դ. Ալիշանը այն կարծիքն է հայտնել, որ նրանք օրիգինալ բնագրեր չեն, այլ հետագայի արտագրություններ[1] (դրանք մեր ժողովածուի № 2 և 5-ն են)։

Նախ № 2-ի մասին. բանասիրական ու պատկերավոր այդ նախադասությունը Ստ. Օրբելյանի արտագրած բնագրում կազմում է շինարարական արձանագրության մի մասը, նրա վերջաբանը, այս իսկ պատճառով էլ նրա մասին եղած կասկածը կարելի է ընդհանրացնել շինարարական արձանագրության մասեր կազմող բոլոր բեկորների վրա (1, 2, 3)։ Ալիշանը չի հայտնում իր կասկածին հիմք ծառայող պատճառը, բայց իրոք որ կարելի է մի քանի կասկած հարույց երևույթներ նկատել դրանց նախնական բնագրի մասեր լինելու վերաբերյալ։ Արձանագրության այդ երեք բեկորներից յուրաքանչյուրը գրված է երեսապատման մի քարի վրա, կարճ, բայց ամբողջական տողերով։ Միևնույն արձանագրության մասեր լինելու դեպքում նրանք պետք է իրար տակ դասավորված լինեին, սակայն քարերի չափերը և տողերի երկարությունները տարբեր են։ Տառերի ոճն էլ թեև ընդհանուր է, բայց տարբեր են իրենց գրչությամբ. մի դեպքում ցածր, լայն ու փռված են (1), մյուս դեպքում բարձր ու հավաք (2). բեկորներից երկուսն այժմ ագուցված են պատի մեջ, բայց իրարից հեռու տեղերում, 3-ը ընկած է պատի տակ. Նրա վրայի արձանագրությունը կրկնությունն է 2-ի բանասիրական նախադասության։ Օրբելյանի բնագրում արձանագրությունն ավարտվում է այդ նախադասությամբ, բայց այս բեկորի վրա կա ինչ-որ անորոշ շարունակություն։

Բոլոր այս տարբերությունները վկայում են այն մասին, որ այս երեք բեկորներն իրենց բովանդակությամբ թեև մաս են Ստ. Օրբելյանի արտագրած շինարարական մեծ արձանագրության մեջ, բայց տեղագրական և գրչության համաչափություն չունեն, հետևաբար նույնիմաստ, բայց տարբեր արձանագրությունների մասեր են։

Դ. Ալիշանը նույն կասկածն է հայտնել նաև մեր 4-ի նկատմամբ, բայց այս դեպքում պատճառաբանությամբ։ Չհավատալով իր անմիջական աղբյուր Քաջբերունուն, արձանագրության միջից ջնջել է մի ամբողջ նախադասություն—Ի.Զ.։ ԿԱՐԴԻՍ ԱՌԱՋ ԱՐԱՐԻ-համարելով այն անիմաստ և հին բնագրից ի նորո արտագրողի սխալ։

Իրականում այդ նախադասությունը կա արձանագրության մեջ և միայն կարելի է զարմանալ, որ բազմահմուտ Ալիշանը իմաստ չի գտնում նրա մեջ։ Այստեղ խոսքը վերաբերում է հոգևորականության «կարգին» կամ «աստիճանին», «դասին». բավական է նշել միայն Ստ. Օրբելյանի Պատմության մեջ գրված մի հատուկ գլուխն այդ մասին—«Վասն ինն դասուց եկեղեցւոյ թէ որք են և որպէս վարին», ըստ որի հոգևորականությունը բաժանվում է ինը դասերի, որի վեցերորդ դասը՝ «Սարկաւագունք որք են սպասաւորք. և յայլ լեզու դիակոնք կոչին» (գլ. ԻԷ, էջ 110)։

Այս խնդրի պարզաբանումը կարևոր է և ուրախանալ կարելի է, որ մեր բազմաթիվ անանուն նկարիչներից գոնե մեկի՝ Եղիշալի մասին, այս մանրամասնությունը հայտնի է դառնում։ Ստ. Օրբելյանն Եղիշալին մկրտել է «քահանայ», բայց ինքը նկարիչն իր մասին հայտնում է, որ տաճարի նկարազարդումը կատարել է սարկավագ լինելուց առաջ։ Սարկավագին նախորդող կարգը, ըստ նույն պատմիչի է՝ «դպիրք որք են կէս սարկաւագունք» (ԻԷ, III)։ Այս մանրամասնության ճշտումը ցույց է տալիս մի կողմից, մեր տաղանդավոր նկարչի բացառիկ բնածին տաղանդը. դպրի աստիճան ունենում է եկեղեցական գործիչը շատ երիտասարդ, գրեթե պատանի հասակում։ Մյուս կողմից պարզվում է, որ վանքի շինությունը, որն ավարտված է 936 թ., շատ վաղուց էր սկսված, քանի որ Եղիշան դեռևս 931 թ. արդեն ավարտել էր տաճարի նկարազարդումը։

Նախապես նշել ենք, որ վանքի շինությունը ժամանակակից են մեր 1—8 արձանա-

[1] «Սիսական», էջ 105-ի և 106-ի ծանոթությունները։

գրությունները։ Դրանցից երկուսը՝ 6, 8, գտնվում են խաչքարերի վրա, առաջինը ագուցված պատի մեջ, իսկ երկրորդը ազատ կանգնած խաչքարի վրա, իսկ № 6-ը հիշատակագրություն է Սարգիս առաջնորդի։ Հայտնի է, որ վանքում եղել են երկու Սարգիս առաջնորդներ, մեկը՝ կարգված շինարարության ընթացքում և մյուսը XI դարի սկզբին. հայտնի ջրանցք կառուցողը։ Այս հիշատակագրությունը Սարգիս Ա-ին ենք վերագրում, իսկ երկրորդի նախնական տեղն անհայտ է, ընկած է այժմ եկեղեցու հարավային պատի տակ, հայր Սուփանի անվան հիշատականով։ Կասկած չկա, որ դա Սուփան Գնդունին է, ծերունի ճգնավորը, որի հիշատակությունը կրկնվում է մի անգամ ևս, պատի երեսից ընկած մի քարի վրա (7)։

Մենք արձանագրությունների այս խումբը (8 հատ) ժամանակակից ենք համարում, վանքի շինությանը։ Բավական է մի ակնարկ նետել դրանց բնագրերի մեր գծագրությունների և լուսանկարների վրա, որպեսզի ակնառու դառնա ոչ միայն գրչության, այլև գրող գրչի նույնությունը։

Բարեբախտաբար դրանք բոլորն էլ գրված են առանց կաղապարի (տրաֆարետի) և իրարից տարբերվում են միայն տառերի չափերով և դասավորությամբ։ Առանձնապես նշելի է Կ տառի բնորոշ գրչությունը, ուր երկու ուղղահայաց գծերն իրար միացնող հորիզոնական մեկ գծիկի փոխարեն, որը սովորական է, երկուսն է գործածված և մեջը բաց տարածություն է թողնված։

Այս բոլորը նկատի ունենալով, ամբողջ խումբը համարում ենք գրված միաժամանակ վանքի շինության և ավարտման ընթացքում։ Եթե ենթադրենք անգամ, որ վանքն ավերվելուց հետո նրա հետագա նորոգողները կարող էին վանքի հիմնադիր և հովանավորող տիկին Սոփիայի արձանագրությունը ի նորո վերարտադրել և պատի մեջ դնել, ապա անհավանական է միանգամայն, որ այդ մարդիկ նույն փութաջանությունը հանդես բերեին համեստ դպիր Եղիշայի կամ առաջին վանահայր Սարգսի և Սուփան ճգնավորների հիշատակի վերաբերյալ, և նույնիսկ խաչքարերն էլ վերականգնեին։

Նշենք մի կարևոր հանգամանք ևս. պատմագիր Ստ. Օրբելյանը տեսել է այդ արձանագրությունը (շինարարական) ամբողջական վիճակում. քանի որ նրա արտագրած բնագրի միջին մասն այժմ ընդհանրապես գոյություն չունի տեղում, ուրեմն, ավերմունքը և որոշ արձանագրությունների հետագա վերականգնումը կարող էին տեղի ունենալ միայն XIV դարում. արձանագրությունների այս խմբի գրչության ոճը ոչ մի կապ չունի XIII—XIV դարերի գրչության հետ, որոնց նմուշներն, ի դեպ, հենց Գնդեվանքում էլ կան։ Ենթադրել, որ արտագրության ժամանակ բովանդակության հետ պահպանվել է նաև գրչության ոճը՝ միանգամայն անկարելի է։

Այն հանգամանքը, որ այդ խմբի արձանագրությունների բեկորներն իրենց բովանդակությամբ համընկնում են շինարարական մեծ արձանագրությանը, բայց տեղադրական և գրչագրական չափերով ոչ, և դրանցից երկուսը նույնիսկ կրկնություն են (2, 5), ապացույց է միայն այն բանի, որ հենց սկզբնապես գրվել է նույնիմաստ մեկից ավելի արձանագրություններ։ Կարծում ենք, որ շինարարական մեծ արձանագրությունը գտնվելիս է եղել եկեղեցու հարավային պատի վերին մասում, արտաքուստ, որ այժմ էլ մի քարի վրա մնացել են ԻՇԽԱՆԻ Ս... գրերը՝ գրված արձանագրությունների հին խմբի գրչությամբ, բայց կրկնակի խոշոր գրերով։

Այսպիսով, կարծում ենք, որ տեղում պահպանված մի քանի բեկորները, որ նույնիմաստ են, բայց գրված տարբեր չափերի գրերով, նույն բովանդակությունն ունեցող տարբեր արձանագրությունների մասեր են՝ գրված շինության ժամանակ։

Գնդեվանքից և Գնդեվազ գյուղից այս ժողովածուի մեջ ամփոփված են 30 արձանագրություն, որոնցից 12-ը հրատարակվում են առաջին անգամ։

1. *ԳՆԴԵՎԱՆՔԻ արևմտյան պատի հարավային անկյունում, երեսպատման մի քարի վրա, արտաքուստ, շինարարական արձանագրության սկզբի մասը, 5 տող.*



ԵՍ ՍՈՓԻ ՍԻՆԵԱՅ ՏԻ[Կ]ԻՆ, ԳԵՐԱՆԿԻՆ [Կ] ԴՈՒՍ[Տ]Ր, ԿԻՆ ՍՄԲԱՏԱ, ՈՐԴԻ[Ն] ԱՇՈՏԻ ՍԻՆԵՑ ԻՇԽԱՆ[Ի], ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ...

Ծանոթ. *ՍԻՆԵԱՅ և ՍԻՆԵՑ բառերը հավանաբար նշանակում են ՍԻՒՆԵԱՑ. չենք ուզում և լռում, որովհետև Սյունյաց նահանգի արձանագրություններին մեջ նման գրության հանդիպում է այլ վայրերում ևս, կարծում ենք, որ դա ժողովրդական արտասանություն է։*

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78* IV, *355։ Ալիշան, 105։ Լալայեան, Ազգ. հանդ.* XXVI, *13։* ՄԱԿ, *150։*
Լուսանկ. 1։

2. *ԳՆԴԵՎԱՆՔԻ արևմտյան պատի կենտրոնական մասի երեսպատման մի քարի վրա, արտաքուստ. շինարարական արձանագրության վերջին մասը. 4 տող.*



ՄԱՏԱՆԻ[Ս] Լ[Ի]Ր ԱՆԱԿՆ Ե[Ս] ԴԻՒՐ ՍՈՓԻ Ս[Ի]ՆԵԱՅ ՏԻԿԻ[Ն]...

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78* IV, *355։ Ալիշան, 106։ Լալայեան, Ազգ. հանդ.* XXVI, *13։* ՄԱԿ, *151։*
Լուսանկ. 2։

3. *ԳՆԴԵՎԱՆՔԻ հարավային պատի առել ընկած երեսպատման ջարդված մի քարի վրա՝ շինարարական արձանագրության վերջին մասի մնացորդներով. 4 տող.*



....ԱՆԱԿՆ[Ն] ....ԱԿՆ ԵԴԻՒՐ [Ս]ՈՓԻ ՍԻՒՆԵԱՅ ՏԻ[Կ]Ի[Ն] ..... ԱԻՈՐԵ.....

Լուսանկ. 3։

4. ԳՆԴԵՎԱՆՔԻ արևմտյան պատի հյուսիսային մասում, երեսպատման մի փոքր քարի վրա, արտաքուստ, շինարարական արձանագրության բեկոր, 1 տող.



· · · · · · · ԻՇ|ԽԱՆԻ Ս|ԻՒՆԵԱՑ| · · · · ·

Ծանոթ. Այս բեկորը № 1 արձանագրությանը կից է հյուսիսային՝ վերևի զոտում, բայց գրված է ավելի մեծ տառերով, թեև նույն գրչությամբ։

Լուսանկ. 4։

Շինարարական արձանագրության մասը և բեկորներ կազմող այս չորս արձանագրությունները թեև ընդհանուր բովանդակությամբ համընկնում են Ստ. Օրբելյանի արտագրած բնագրին, բայց ինչպես քարերի, նույնպես և գրերի չափերը և մանավանդ արձանագրության վերջին մասի բովանդակությունը մատնացույց են անում նույն բովանդակությամբ երկու առանձին արձանագրությունների գոյությունը, որի մասին տես ավելի մանրամասն՝ Ներածությունը։

Բեկորների իմաստը լրիվ դարձնելու համար մեջ ենք բերում Ստ. Օրբելյանի գրած բնագիրը.

«Ես Սոփիա տիկին՝ կին Սմբատայ աստուածապահ տեառն Սիւնեաց, և դուստր Գրիգոր Դերենկի, շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ և յարեշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ և որդւոց մերոց, և զարդարեցի զսա մեծամեծ սպասիւք. եւ ետու զերկու գիւղս ի ժառանգութիւն սմա, զոր մի՛ ոք իշխեսցէ խափանել կամ հանել ի սուրբ եկեղեցւոյս, ապա թէ ոչ՝ անլուծանելի նզովիւք անիծեալ լիցին յԱստուծոյ և յաստուածազգեստ սրբոց. մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի զսա և եդի ակն ի վերայ»։

Ստ. Օրբելեան, Պատմութիւն, 261—262, Թիֆլիս, 1910։



5. ԳՆԴԵՎԱՆՔԻ հարավային պատի արևմտյան անկյունում, երեսպատման մի քարի վրա, արտաքուստ, 10 տող.

:ՅՉ:(931)Թ[ՈՒԱ]Կ[ԱՆ]ԻՍ ԵՍ Ե|ՂԻՇԱ Ի:Չ: ԿԱ|ՐԴԵՍ ԱՌԱ|Ջ ԱՐԱՐԻ, ԱՌ|ԱՋՆՈՐԴՈՒ|ԹԵԱՄԲ ՍԱՐ|ԳԻՍ ՔԱՀԱՆ|ԱԻ, ՈՐ ԿԱՐԴԱ|Ք ՏՐ. ՈՂՈՐՄ|Է ԱՍԱՑԷՔ.

Ծանոթ. Ստ. Օրբելյանը հաղորդում է, որ Եղիշան եկեղեցու շինության վերակացու և նկարիչ է նշանակված եղել. ուստի և պետք է այս Եղիշային համարել մինչև այժմ էլ եկեղեցում մասամբ պահված որմնանկարների հեղինակը։

Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, IV, 355։ Ալիշան, 106։
Լալայան, Ազգ. հանդ. XXVI, 13։ ՄԱԿ, 149։
Լուսանկ. 5։

6. ԳՆԴԵՎԱՆՔԻ արևմտյան պատի կենտրոնական մասի վերևում, խաչերի տակին, երեսպատման մի քարի վրա, արտաքուստ, 4 տող.



ԽԱՉՍ ՍԱՐ|ԳԻՍ ԱՌԱՋ|ՆՈՐԴԻ ԷԿԵ|ՂԵՑՒՈՅՍ Է:

Ծանոթ. Համարում ենք վանքի առաջին վանահայր Սարգսի հիշատակագրություն, ժամանակակից վանքի շինարարությանը 936 թ.։

Հրատ. Քաջբերունի, Փորձ. 1877/78, 355։ Ալիշան, Սիսական, 106։
Լալայան, Ազգ. հանդ. XXVI, 14։ ՄԱԿ, 151։
Լուսանկ. 6։

*7. ԳՆԴԵՎԱՆՔԻ հարավային պատի տակ ընկած երեսպատման մի հին քարի վրա, 4 տող.*



ԱՍՏԱՆՈՒՐ Ա̄ԾԱՅԻՆ ՆՇԱՆԻՍ ՅԻՇԵԱ, ՁՀԱՅՐ ՍՈՒՓԱՆ ՁԻ ԳՏԻՑ . . . . . . :

Ծանոթ. *Շարունակությունը պետք է լինի այլ քարի վրա, որը չի հայտնաբերվել:*

*Սուփանը վանքի շինությունից առաջ ձորում ապրող ճգնավորներից ականավորներից էր, որոնք հետո խմբվեցին վանքում, հետևապես արձանագրությունը ժամանակակից է շինությանը—936 թ։*

Լուսանկ. 7:

*8. ԳՆԴԵՎԱՆՔԻ հարավային պատի տակ ընկած հին խաչքարի բեկոր, խաչի թևերի շուրջը և տակը.*



ՀԱՅՐ ՍՈՒՓԱՆ ԿԱՆԳՆԵՑԻ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻՍ ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ. Ք̄Ս. Յ̄Ս.:
. . . . . . . ՇԻՆԵՑԱՒ . . . . . . :

Ծանոթ. *Խաչքարի ստորին մասն այժմ կոտրված և կորած է, այնտեղ գտնվող վերջին տողից մնացել են* շինեցաւ *բառի միջին չորս տառերը. սակայն նախկին հրատարակիչների մոտ այն լրիվ է և ունի հետևյալ բովանդակությունը.* «ՆԺԶ (=967) թուին շինեցաւ սրահս»: *Կարծում ենք, որ սխալ է արտագրված. նախ՝ որովհետև Գնդեվանքում սրահ գոյություն չունի. սրահ բառը գավիթը հասկանալ չի կարելի, որովհետև վերջինս կառուցվել է ավելի ուշ՝ 999 թ. (Օրբելյան, 262). Սուփանը նախորդ արձանագրության մեջ հիշատակվածն է, Գնդունի կոչված, որ շատ ծեր պիտի լիներ նույնիսկ վանքի շինության ժամանակ և հազիվ թե շինությունից գեթ 31 տարի անց կենդանի մնար: Արձանագրության թիվը, այս պատճառներով, կարող էր լինել միայն ՅՁԶ=937, վանքի ավարտումից միայն մի տարի անց և, հավանաբար, այդ ժամանակ գավթի տեղում շինվել է սրահ, որը և 999 թ. վերակառուցվել և դարձվել է գավիթ։*

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877/78,* IV, *357։ Ալիշան, 106։*
*Լալայան, Ազգ. հանդ.* XXVI, *13։*
Լուսանկ. 8:

*9. ԳՆԴԵՎԱՆՔԻ հարավային մուտքի բարավորի վրա չշարունակված արձանագրության մաս.*



Թ̄Վ :Զ: . . . .

Հրատ. *Բաջբերունի, Փորձ. 1877/78,* IV, *355։*
Լուսանկ. 9:

10. *ԳՆԴԵՎԱՆՔԻ արևմտյան խաչթևի հարավային պատին, ներքուստ, 9 տող*



ԿԱՄԱՒՆ ԱՅ. ԵՍ ԳՐԻԳՈՐԻՍ ՆՈՐՈԳԵՑԻ ԶՍԲ. ՎԿԱՅԱՐԱՆՍ Ի ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՒՈ ԻՄՈ. ԱՅՍ ԱԲԵՂՆ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ ԻՆՁ :Բ: ՊԱՏԱՐԱԳ | ԱՒԱԳ :Ե: ՇԱԲԱԹԻՆ. ԿԱՏԱՐԻՉՔՆ | ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ, ԽԱՓԱՆՈՂՔՆ ԴԱՏԻՆ Ի ՏԷ :ԶԾԸ: (1309). ԳՐԻԳՈՐ | ԳՐԻՉ ՅԻՇԵՑԷՔ:

*Հրատ. Ջալալեանց, Բ, 117, Ալիշան, 106, Լալաեան, Ազգ. հանդ.* XXVI, *13—14,*

11. *ԳՆԴԵՎԱՆՔԻ գավթի հյուսիսային պատին կից մույթի վրա, ներքուստ, 11 տող.*



ԱՆՎԱՆԲՆ ԱՅ. ԵՍ ԱՇՈՏ, ԲՈՒԿԱՅ ՈՐԴԻ, ԱԾ ԻՆՁ ՈՂՈՐՄԵՑԱՒ ԻՄ ԱՒԱԳ ՈՐԴԻՆ ՔԲԻ. ՓՈԽԵՑԱՒ. ԵՍ ՏՎԻ ԶՄԵԾ ԱՅԳԻ ԶԽԱՐԱՏԱՆԱՆԻՆ ՀՈՂՆ ՑԵԿԵՂԵՑԻՍ. Ի ՏԱՐԻՆ :Բ: ԱՒՐ ԺԱՄ ԶՆՈՐ ԿԻՐԱԿԻՆ ԱՒՆԵՆ ՀԱՍԱՆԱ։

*Հրատ. Ջալալեանց, Բ, 147, Ալիշան. 106, Լալաեան, Ազգ. հանդ.* XXVI, *14,*
Լուսանկ. 10:

12. *ԽԱՉՔԱՐԻ ստորին մասի վրա. ընկած է գավթի մեջ. 6 տող.*



ՔՍ. ԱԾ. ՈՂՈՐՄԵԱՅ ԶՔՈՅՐԱ ԾԱՅՐԻՆ ՋԲԱՐԻ ՏԻԿՆԱՅ ՀՈԳԻՆ:

Ծանոթ. *Խաչքարի վերի մասը չհայտնաբերվեց, հետագայում ամբողջ քարի մեջը փորված, լուսանցք է շինված եղել:*

Լուսանկ. 11:

*13.* **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև, գտնվում է գավթի հյուսիսային պատի մոտ. 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԿԻՍՏՊԱՐՈՆՍՈՒԹԱՆՂՈՒԼԻՆ
ԵՒՊԱՐՈՆՆԱՂԱՆԱՅԽԱԹՈՒՆԻՆԹՎ:ՋՂԲ:

ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ՊԱՐՈՆ ՍՈՒԼԹԱՆՂՈՒԼԻՆ|
ԵՒ ՊԱՐՈՆ ՆԱՂԱՆԱՑ ԽԱԹՈՒՆԻՆ. ԹՎ. :ՋՂԲ: (1543):

Ծանոթ. *Երկրորդ տողն այժմ բոլորովին ջարդված է, լրացնում ենք ըստ նախկին հրատարակությունների: Տապանաքարի մի երեսին քանդակված են մաքառող ցուլ և առյուծ, հեծյալ՝ բազեն թևին, մատռվակ՝ գինու գավով և թասերով ու կաքավների երամ:*

Հրատ. *Քաջբերունի, Փորձ, 1877/78,* IV. *337, Ալիշան, 106:*

*14.* **ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև, գտնվում է գավթի հյուսիսային պատի մոտ, նախորդին կից և նրա նման, առանց քանդակների, 1 տող.*

ԱՅՍԷՀԱՆԿԻՍՏՍԻՐՋԱՔՍԻՆՈՎԿԱՐԴՅԻ···

ԱՅՍ Է ՀԱՆԿԻՍՏ ՄԻՐՋԱՔԱՐԻՆ, ՈՎ. ԿԱՐԴԱՑՔ, ՅԻ[ՇԵՑԷՔ].

Ծանոթ. *Անձնանունը համարում ենք կասկածելի, կարելի է նաև ՍԻՐՋԱՔՍԻՆ կամ ՄԻՐ ՋԱՔԷՈՍԻՆ վերծանել: Համարում ենք ժամանակակից նախորդին,* XVI *դար:*

*15.* **ԽԱՉՔԱՐ**, *գեղաքանդակ, դրված է այժմ եկեղեցու արևմտյան պատի հյուսիսային խորշի մեջ, արտաքուստ, ճակատին և տակին. 3 տող.*

ՄԲ ԽԱՉՍԲԱՐԷԽԱՒՍԿԱԵՅԱ···
ՆԻՐՈՐԴՈՅՆԻՒՐՈՅ=ԵՍՎԱՐԴԱՆ



ՔԿԱՉԵՅԻ ԹՎ ՉԶ

ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ԿԱ[ՆԳՆ]ԵՑԱ[Ւ]......|
ՆԻՐ....ՈՐԴՈՑՆ ԻՒՐՈՑ: ԵՍ ՎԱՐԴԱՆ...|
[Ք] ԿԱՉ[Մ]ԵՑԻ. ԹՎ. :ՋԶ: (1551):

Ծանոթ. *Կազմողը համարում ենք Գլոլաքասի խաչքարի համանուն վարպետի հետ նույն անձը՝ Վարդանը.*

Հրատ. *Լալայան, Ազգ. Հանդ.* XXVI, *14:*



*16.* **ԽԱՉՔԱՐԻ** *բեկորի վրա. ընկած է այժմ եկեղեցու հարավային պատի տակ.*

. . . . . ԲԱՐԷԽԱՒՍՈՒԹԻ . . . .
. . . ՈՐԴԻ ԽՈՑԱՅԴԵՂ[ԻՆ].



2—363

17. **ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *վրա. գտնվում է գավթի հյուսիսային պատի մոտ. 4 տող.*





ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ԱԻԱՔԻՆ ՈՐ ԿԱՐՃ ԱԻՐԱՒՔ ԵԼԱՒ, ԷԱՌ ԱՆԴԱՌԱՄ ՊՍԱԿՆ. ՆԱՅ ԷՐ ՈՐԴԻ| ԱՄԻՐ ԴՈՒԼԻՆ ԵՒ ԹՈՌՆ ՊԱՐՈՆ ՇԱՀՄԱՍՈՐԻ. ԹՎ.: ՌԺԶ: (1567)| ՇԱՀՄԱԶՆ, ԳՐԻԳՈՐՆ, ՄՈՒԲԱՑԻԼՆ, ՀԱՐԱՊԵՏ ՀԷՐՑ ԻՇԵՑԷՔ ՔՍ:

Ծանոթ. *Տապանաքարի յուրաքանչյուր կողին երկու տող է գրված։ Քարն այժմ կոտրված է երկու մասի և իր տեղումն է։ Ծայրերի ջարդված մասերը լրացնում ենք նախկին հրատարակություններից։*

*Տապանաքարի հարավային կողին քանդակված է թամքած ձի, մի մարդ մի ձեռքով բռնել է սանձից, մյուսին բոզն, առաջին գավ. մի ուրիշը ծունկի եկած նետ է արձակում փախչող երեք կենդանիների ետևից։ Վերագրում ենք XVI դարին։*

Հրատ. *Լալայան, Ազգ. հանդ.* XXVI, 14. ՄԱԿ, *132.*

Լուսանկ. 13:

18. **ԽԱՉՔԱՐ,** *մեծարվեստ, ագուցված է եկեղեցու արևմտյան մուտքի կամարից վեր, պատի խորշի մեջ, արտաքուստ. տակին 3 տող.*

ԵՍ Դ.ԱՐՏԱՇՍ ԿԱԶՄԵ/ՑԻ ԽԱՉՍ. ԹՎ. :ՌԻԲ: (1573):



Ծանոթ. *Խաչի վերին թևի գլխին քանդակված է թևատարած արծիվ, հորիզոնական թևերի տակ սրբապատկերներ։ Շրջանակների ղեղաքանդակ քառակուսիների մեջ դեմ դիմաց, մարդու գլուխ և թամքած ձի։ Խիստ ուշագրավ է ու առանձնահատուկ։ Շինված է սպիտակավուն քարից։*

Լուսանկ. 14:



19. **ԽԱՉՔԱՐ,** *ղեղաքանդակ, փոքր, ընկած է եկեղեցու հարավային պատի տակ, 3 տող.*

ԵՍ Դ.ԱՐՏԱՇ|Ս ԿԱԶՄԵՑԻ ՍԲ.|ԽԱՉՍ. ԹՎ. :ՌԻԲ: (1573):

Լուսանկ. 15:

20. **ԽԱՉՔԱՐ,** *փոքր, ղեղաքանդակ, սպիտակավուն քարից, ագուցված է եկեղեցու հարավում գտնվող տնտեսական շենքի հյուսիսային պատի վերին մասում. տակին 3 տող.*



ՍԲ. ԽԱՉՍ ԿԱՆԿԵԱՒ Ի ՓՐԿՈՒ|ԹԻ. ՀՈԳՈՑ ԻՄՈՑ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ:| ԵՍ Դ.ԱՐՏԱՇՍ ԿԱԶՄԵՑԻ ՍԲ. ԽԱՉՍ. |ԹՎ.| :ՌԻԲ: (1573):

Հրատ. *Բաշխերունի, Փորձ, 1877.78,* IV *387. Ալիշան, 108.*

**21. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, գեղաքանդակ, սպիտակավուն քարից, ագուցված է եկեղեցու հարավում գտնվող տնտեսական շենքի հյուսիսային պատի վերին մասում, ճակատին 2 տող.*



ԵՍ ՄՍՐՈԲ ԿԱՆԿՆԵՑԻ ՍԲ ԽԱՉՍ | ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈՅ. ԹՎ. ՌԻԲ: (1573):

Ծանոթ. *Ղարաշի ձեռագործն է:*



**22. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, գեղաքանդակ, ագուցված է եկեղեցու հարավում գտնվող տնտեսական շենքի հյուսիսային պատի վերին մասում, 3 տող.*

ԶՍԱՐԳԻՍ ԵՒ ԶԳՐԻԳՈՐ . . . . . . . | . . ՔԱՀԱՆԱ|
ԸՍՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՑՍ . . . . :

Ծանոթ. *Խաչքարի ստորին մասը և վերի ձախ անկյունը ջարդոտված են:*

**23. ԽԱՉՔԱՐ**, *փոքր, գեղաքանդակ, գտնվում է պարսպից դուրս, արևելյան մուտքի մոտ, տեղահան արված, ճակատին և տակին 3 տող.*



ԵՍ ԽԱՆԻՍ ԿԱՆԿՆԵՑԻ | ԽԱՉՍ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ. ԹՎ. ՌԿ: (1611):

**24. ԳՆԴԵՎԱՆՔԻ** *պարսպի արևմտյան մուտքի կամարակալ քարին, արտաքուստ, 7 տող.*



ՇՆՈՐԱՒՔՆ ԱՅ, ԵՍ| ԱՆԱՐԺԱՆ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՎԵՐ|ՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԻ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻՍ, ՀԱՆԴԵՐ|Ձ ԺԱՄԱՏԱՆՕՔՍ, ՇՈՒՐՋԱՆԱԿԻ ՊԱՐՍՊՕՔ| ԵՒ ԱՄԱՐԱԹՕՔ ՑԱՄԵՆԱՑՆԻ. ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ| ԵՒ ԻՄ ԾՆՕՂԱՑՆ. ՀՕՐՆ ԻՄՈՅ ՅՈՎԱՆԻՍԻՆ ԵՒ | ՄՕՐՆ ԽԱՆՈՒՄԻՆ. ԹՎԻՆ ՌԽ: (1591):

*Հրատ. Ջալալեանց, Բ. 147. Ալիշան, 105, ՄԱԿ, 150,*
Լուսանկ. 16:

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

***25. 1875 թ. վանքի բակում, տնտեսական շենքերի առաջ բացված մի հոր-թաքստոցից հանված պղնձեղեն ստաների և անոթների վրա եղել են հետևյալ արձանագրությունները, որոնք այժմ չկան և որոնց բովանդակությունն առնում ենք Քաջբերունուց։***

Զանգի վրա.

:ՋԾՁ: թվ. Զաարկաւագ քահանայ յիշէք ի Քրիստոս, որ ստացաւ զսա.

Ծանոթ. *Զանգը եղել է մեծ, 32 կիլոգրամ քաշով։*

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, IV, 358։ Ալիշան, 107։*

***26. ԾՆԾՂԱՑԻ վրա.***

Յիշատակ է Գնդեւանայ սուրբ նախավկային. թվ. :ՌՃԽ:

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, IV, 358։ Ալիշան, 107։*

***27.*** Յիշատակ է Գնդեվանա սուրբ նախավկին.

Ծանոթ. *Չի ճշտակված, թե ինչ իրի վրա է եղել, իրերի այս խմբի մեջ են՝ մի թեշտ, մի լագան, մի ավթավալ, մի միջակ սինի, մի կափարիչ, մի կաթսայ և չորս փոքրիկ զանգակներ ըստ Քաջբերունու։*

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, IV, 358։ Ալիշան, 107։*

***28. ԲՈՒՐՎԱՌԻ վրա.***

Յիշատակ է Ծատուրի որդի Ակոբին, որ ետ ի դուռն Նախավկային։

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, IV, 358։ Ալիշան, 107։*

***29. ԳՆԴԵՎԱԶ գյուղի ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի ճակատին, արտաքուստ.***

Ես անարժան Պետրոս վարդապետ շինեցի սուրբ Աստուածածնի եկեղեցիս
վասն փրկութեան հոգւոյ իմոյ և ծնողացն Ովանէսին և Խանումին.
թվ. :ՌՃԼԵ: (1686):

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1877/78, IV, 353։ Ալիշան, 103։*

***30. ԳՆԴԵՎԱԶ գյուղի գերեզմանատան մեջ մի խաչքարի վրա 3 տող.***

ԻԹՒՎՆՌՃՀԱԷՐԵՍԿԱՐԱՊԵՏԵՐԵՑԿԱՆԳ
ՆԵՑԻԶԽԱՉՍԻԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆՀՈԳՈՑ
ԻՄՈՅԵՒՈՐԴՈՒՍԱՒԱԿՏԷՐ·········

Ի ԹՒՎՆ :ՌՃՀԱ: (1722) ԷՐ. ԵՍ ԿԱՐԱՊԵՏ ԵՐԵՑ ԿԱՆԳ|ՆԵՑԻ ԶԽԱՉՍ
Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՑ| ԻՄՈՑ ԵՒ ՈՐԴՈՒՍ ԱՒԱԿ ՏԷՐ . . . .

Ծանոթ. *Գծագրությունն ստացել ենք Հ. Եղիազարյանից։*